



**ՀԱՉԱՐԱՄՅԱԿԻ
ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ
ՀԻՄՆԱԳՐԱՄ-ՀԱՅԱՍՏԱՆ**

Մամյո հաղորդագրություն

16 հոկտեմբերի, 2008

Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստանը ներկայացրեց Գյուղատնտեսական գործունեության հետազոտության արդյունքները

Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստանը (ՀՄՀ-Հայաստան) հրապարակեց Գյուղատնտեսական գործունեության հետազոտության (ԳԳՀ) առաջին փուլի արդյունքը, որը հիմք կհանդիսանա Ջրից դեպի շուկա բաղադրիչի ազդեցության գնահատման համար: Հետազոտությունն իրականացվել է «ԱՐԵԳ»-ի և «Ջեն քոնսալթ» ընկերությունների կոնսերժիումի կողմից՝ ՀՄՀ-Հայաստանի պատվերով: Հետազոտության արդյունքների վերլուծությունն իրականացրել է Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի կողմից վարձված «Մաթեմատիկա փոլիսի ըրսըրչ» (ՄՓՐ) ընկերությունը: Հետազոտության արդյունքներն այսօր հանրությանը ներկայացրին ՀՄՀ-Հայաստանի, ՄՓՐ-ի և «ԱՐԵԳ»-ի ներկայացուցիչները:

ԳԳՀ-ն ծրագրի Ջրից դեպի շուկա բաղադրիչի, հատկապես ջրի ներտնտեսային կառավարման և բարձրարժեք գյուղատնտեսական արտադրության գծով դասընթացների ազդեցության գնահատման հիմնական աղբյուրն է: Հետազոտությունը կարևոր տվյալներ է պարունակում այնպիսի չափորոշիչների վերաբերյալ, ինչպիսին են դասընթացին մասնակցած ֆերմերի հողի ծավալը, տեսակը, բերքի արտադրությունն ու իրացումը, եկամուտն ու աղքատության մակարդակը:

ԳԳՀ-ի միջոցով հարցազրույցի է ենթարկվել 200 համայնքում բնակվող 4855 ֆերմեր: Դրանցից 120-ը «նպատակային» խմբի մեջ մտնող համայնքներն են. այստեղ վերապատրաստման դասընթացներն իրականացվել են ծրագրի երկրորդ տարվա ընթացքում: Մնացած 80-ը «հսկիչ» խմբից են, որտեղ ուսուցումը կիրականացվի ծրագրի վերջին տարում: Այսպիսի բաժանումը թույլ կտա ազդեցությունը գնահատողներին ուսումնասիրել և համեմատել ծրագրի իրականացման տարբեր փուլերում վերապատրաստում անցած ֆերմերների/գյուղացիական տնտեսությունների գրանցած առաջընթացը:

Ջրից դեպի շուկա բաղադրիչի, մոնիթորինգի և ընդհանրապես ՀՄՀ-Հայաստան ծրագրի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության համար խնդրում ենք այցելել՝

www.mca.am

###

Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ - Հայաստանը (ՀՄՀ-Հայաստան) պետական ոչ առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է ՀՀ կառավարության կողմից և պատասխանատու է Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի ու ՀՀ կառավարության միջև կնքված Համաձայնագրի թափանցիկ իրականացումը վերահսկելու համար: